

Հանուն, թե՛ ընդդեմ Արցախի

Հայաստանը և Արցախն ապրում են ճակատագրական ծանր ժամանակներ: Այդ ճգնաժամն ավելի խորացավ Շահումյանի իրադարձություններից հետո, երբ անհավասար պայքարում իրենց դիրքերը զիջեցին մեր ազատամարտիկները, և արցախյան պայքարը թևակոխեց շափազանց ծանր փուլ: Հպանցիկ վերլուծությունը, մամուլում հրապարակված նյութերն ու մարտական գործողությունների մասնակիցների պատմություններն աներկրա վկայում են, որ մեր կողմը բավարար պատասխանատվությամբ չէր նախապատրաստվել սպասվող ազդեցության, և դա վերաբերում է ինչպես պետական կառուցվածքներին, այնպես էլ մյուս կազմակերպություններին: Ավելին, չի եղել արդյունավետ կապ և արդյունավետ համագործակցություն Հայաստանի և Արցախի իշխանությունների միջև: Այսօր էլ չի կատարվում անհաշիվությունների առողջ և շահեկան վերլուծություն:

Դա հետևանք է այն բանի, որ Արցախի հարցում չկա միասնական մշակված քաղաքականություն: Պետական իշխանությունները ոչ բացահայտ վարում են լիբերալ քաղաքականություն և չարժեն թե՛ դեմ շեն Արցախն Ազրբեյջանի կազմում թողնելու Քուրթիայի—Ազրբեյջանի և նրանց քաղաքական գծին լծված մի շարք պետությունների կոնցեսյաններին: Իսկ ազդեցիկ քաղաքական կուսակցությունները և ամբողջ ժողովուրդը կողմ են Արցախի հարցի արմատական լուծմանը:

Այժմ տեսնենք, թե ինչ կտա մեզ թե՛ մեկը և թե՛ մյուսը: Նախ, եթե մենք մի օր պիտի համաձայնեինք Արցախը թողնել Ազրբեյջանի կազմում, ապա բացահայտ անիմաստ են դառնում Արցախի համար ի սկզբանե ծավալված ամբողջ պայքարը, հազարավոր թանկ զոհերը, շրջափակումները, այս անլուր զրկանքներն ու մղձավանջները: Հատկապես որ ժամանակին ինքը՝ Ազրբեյջանն ու նրա բարձրաստիճան ղեկավարներն էին մեզ խնդրում և անում բազմաթիվ դիշոզություններ (ավելի, քան կարելի էր սպասել), միայն թե համաձայնեինք այսպես կոչված «կուլտուրական ավտոնոմիայի»: Մերժեցինք ու հիմա գնում ենք դրա՞ն, կենքի՞ն, արդյոք, ժողովուրդն այդպիսի կուրությունը... Գուցե հենց սրանով պիտի բացատրել այն իրողությունը, որ համր երեխայի պես նստել և նայում ենք, թե ինչ կարծիքի են օտար տերությունները: Մինչդեռ օտար տերությունները ոչ միայն Քուրթիայի և Ազրբեյջանի, այլ նաև մեր ասածով պիտի կարծիք կազմեն Արցախի պատմության և Արցախյան պայքարի մասին: Բայց մենք չուրեն առել ենք բերաններս և լռել: Եղա՞վ, իհարկե, չեղավ: Մինչդեռ պիտի գրել, հանգես գալ, աշխարհին պատմել, որ Արցախը Հայաստանի միջուկն է, նրա գոյության գուցեն գլխավոր երաշխիքը: Պիտի ասել, որ Արցախը միշտ եղել է Հայաստանի մասը, որ ինքը՝ Ազրբեյջանն է 1923-ին որոշում հանել Արցախը և նախիջևանն իր օրինական տիրոջը՝ Հայաստանին վերագարձնելու մասին: Բայց նույն Քուրթիայի շանքերով վիժեցվել է մեր հարևան ժողովրդի արգար որոշումը:

Մեծ տերություններին պիտի հարցնել, եթե դուք այդքան շահագրգռված եք Ազրբեյջանի տարածքային ամբողջականությամբ, ապա ինչո՞ւ եք մոռացության մատենել բոլոր կողմերից արբողջված Հայաստանի ամբողջականությունը:

Քուրթիային պետք է հրապարակավ հարցնել՝ գազան-բորենի, լիկել ես մի ամբողջ ժողովուրդ, բռնակցել նրա պատմական հայրենիքը և հիմա էլ խոսում ես մարդու իրավունքներից և ուրիշ բարձր ու ազնիվ բաներից: Պիտի հարցն այնպես դեռ, որ աշխարհը նորից իմանա, այլ ոչ թե տեղի առ: Սուլեյման Գեմիլիի պոստախոսություններին:

Հասկանա՞նք մի պարզ բան. արցախյան պայքարի շարունակությունը վատթարագույն դեպքում կարող է բերել, ևստված մի արասցե, Արցախի կորստյան: Գնալով դիշոզության, մենք կկորցնենք Արցախը: Պատմությունը դա մեզ չի երի: Իսկ ազատագրական պայքարը մեզ կարող է հասցնել բազմալի նպատակին: